ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ

Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ1 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑԻ

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Digitally signed by PETROSYAN ANAHIT 5507720290
Date: 2023.08.31 14:55:01 AMT

ՆԱԽԱԲԱՆ

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի կազման հիմքում ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքում ամրագրված փոփոխություններն են,ՊՈԱԿ–ի օրինակելի կանոնադրության սահմանումները,տնօրենի կողմից կազմված դպրոցի զարգացման հնգամյա ծրագիրի կատարողականի և ներքին գնահատման արդյունքները։Աշխատանքներին մասնակցել են դպրոցի բոլոր օղակները՝ ներկայացնելով առաջարկներ,կատարելով 2022–2023 ուստարվա աշխատանքների վերլուծություն։

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին օրենքով»՝ դպրոցը որդեգրել է ամրագրված նպատակները.

Հոդված 5.Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները

1. Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1.մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.

2.մարդկային արժանապատվության պահպանմանը.

3.իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.

4.ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.

5.մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.

6.ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.

7.որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1.հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնահպանական աշխարհայացքի ձևավորումը

2.հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

3.ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

4.հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը

5.ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

6.անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

7.հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

2023-2024 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու նպատակով կարևորում ենք հետևյալ կետերը:

1. Սահմանել հսկողություն էլեկտրոնային մատենավարությանը:

2. Հանձնարել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանք տանել թույլ և չառաջադիմող սովորողների հետ, կազմակերպել երկարօրյա պարապմունքներ:

3. Հսկել մ/մ աշխատանքները և մասնակցել նիստերին:

4. Պահպանել դասալսումների քանակը՝ շաբաթական 6 ժամ :

5. Դպրոցի դաստիարակչական աշխատանքներում շարունակաբար համագործակցել ծնողական խորհրդի հետ:

6. Ուշադրության կենտրոնում պահել աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքները: /ԱԽ/

7. Ներքին վերահսկողության միջոցով կատարել սովորողների կարողունակությունների զարգացման դինամիկայի գնահատում:

8. Նպաստել մանկավարժական համակազմի ուսուցման ձևավորման հմտությունների զարգացմանը, մանկավարժական գիտական հետազոտական աշխատանքների իրականացմանը:

9. Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, կազմակերպել դասղեկի ժամեր նվիրված ՀՀ խորհրդանիշներին և Հայոց բանակին, հայկական մշակույթին, իրականացնել ճանաչողական դաս–էքսկուրսիաներ:

10. Մանկավարժական կոլեկտիվի աշխատանքները իրականացնել պետական չափորոշիչներով առաջադրված խնդիրներին համապատասխան և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

11. Խրախուսել առարկայական օլիմպիադաներում հաղթող սովորողներին:

12. Դպրոցի կառավարմանը մասնակից դարձնել ծնողական և աշակերտական խորհուրդներին, այն դիտել, որպես քաղաքացիական հասարակության կառուցման հիմնաքար:

2023–2024 ուսումնական տարում հաստատությունում ուսումնական պարապմունքները սկսվում է 2023թ.–ի սեպտեմբերի 1–ին և ավարտվում 2024թ.–ի մայիսի 24–ին:

Ուսումնական շաբաթներ

դասարան	I կիսամյակ	II կիսամյակ	ընդամենը
1–ին դասարան	14շաբաթ և 1 օր	16 շաբաթ	30 շաբաթ 1օր
2–րդ դասարան	15շաբաթ և 1 օր	17շաբաթ	32շաբաթ 1օր
3–րդ – 12–րդ դասարաններ	15շաբաթ և 1 օր	19 շաբաթ	34 շաբաթ 1օր

Ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողներին տրամադրվող արձակուրդների ժամանակացուցը 2023–2024 օրինակելի ուսպլանի համաձայն՝

2023-2024 ուսումնական տարում՝

1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2023թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռային՝ 2023թ. դեկտեմբերի 28-ից 2024թ. հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2024թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:
2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023թ. հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2024թ. մարտի 18-ից մարտի 31-ը ներառյալ:
3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023թ. դեկտեմբերի 25-ից 2024թ. հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2024թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:

ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների և սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Այդ փոփոխությունները կարող է կատարել նաև ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու՝ լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

2023–2024 ուսումնական տարվա համար սահմանվում է.

1.Ուստարվա նպատակը՝
1. Ապահովել սովորողների կրթության որակը.
2. Ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակող-մանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձ:
3. Զարգացնել ապագա շրջանավարտի նկարագրին վերաբերող ռազմավարական դրույթները:

2. Ուստարվա հիմնախնդիրները՝
Ամրապնդել ծնող-դպրոց համագործակցությունը՝ ապահովելով ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկատվությունը, նրանց մասնակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին և դպրոցի կառավարման գործընթացին:

3.Ուստարվա հիմնական դաստիարակչական խնդիրներ
Կազմակերպել բազմաբովանդակ միջոցառումներ՝
1. Սովորողների մեջ համընդհանուր դաստիարակության / գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, քաղաքացիական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, բնապահպանական, իրավական / զարգացման ուղղությամբ:

2. Սովորողների մեջ ձևավորել դրական վերաբերմունք ուսման, կառուցողական հաղորդակցման, կենդանի բնության,սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ.
3. Սովորողների մեջ ձևավորել խոսքի միջոցով համագործակցային փոխհարա-բերություններ կառուցելու, իր և ուրիշների համար թիմով աշխատելու նպաստավոր մթնոլորտ ստեղծելու կարողություն.
4. Սովորողների մեջ դաստիարակել ռազմական գիտելիքների կայուն պաշար կրող, մարտունակ և կարգապահ զինվոր:
5. Շարունակել վերահսկողական աշխատանքները սովորողների հաճախելիությունը բարելավելու նպատակով:

Հանձնարարել մեթոդմիավորումներին՝ մշակել սույն ծրագրից բխող աշխատանքային ծրագիր, հետևողական աշխատանք տանել այն ուստարվա ընթացքում իրագործելու համար:

Հ/Հ	Ամիս, ամսաթիվ	Քայլ	Այլ տեղեկություններ	Կատարող
1	Օգոստոսի 20-30	Դասագրքերի բաշխում		Տնօրեն, գրադարանավար
2	Օգոստոսի 29-31	Մանկ. Խորհրդի կողմից մ/մ կողմից ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում: Դասալսումների քանակի սահմանում:	Մանկ. Խորհուրդը որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքնակը որոշակի առարկայախմբի հատկացնելու վերաբերյալ: Սահմանել դասալսումներ ամիսը 1.ուսուցիչների համար—1 2. մ/մ նախագահների---2 3.տնօրենի տեղակալ---6 4.տնօրեն---4	Տնօրեն, մանկխոր
3	Օգոստոսի 29-31	Տվյալ առարկայախմբին տրված ժամաքանակի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում և մանկ. խորհրդի քննարկմանը ներկայացում: Մանկ. խորհրդի որոշման կայացում, ինչը հաստատվում է տնօրենի հրամանով:	Մանկ. Խորհրդի որոշման և տնօրենի հրամանով 2023-24 ուստարվա ուսումնական պլանի հաստատում:	Մեթոդ միավորումներ, տնօրեն, մանկխոր
4	Օգոստոսի 29-31	2023-24 ուստարվա ուսումնական պլանի հաստատում:		Տնօրեն, մանկխոր
5	Օգոստոսի 27-31	2023-24 ուստարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում	Բաշխումը կատարվում է <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի, ՀՈՒՀ օրինակելի կանոնադրության, մանկ. Աշխատողի պաշտոնի անվանացանկիև նկարագրի և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների:	Տնօրեն
6	Օգոստոսի 31	Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկխորհրդի քարտուղարի ընտրություն	Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուստարի ժամկետով:	Տնօրեն, մանկխոր
7	Օգոստոսի 31	Մ/մ նախագահների և դասղեկների հաստատում	Հաստատվում է տնօրենի հրամանով	Տնօրեն, մանկխոր

8	Օգոստոսի 31	Դասարանների կազմավորում	Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, դպրոցի տնօրենի հրամանով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության դասարանների կազմավորման կարգի պահանջները: Հաստատության տարրական և միջին դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է, ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը՝ 30:	
9	Օգոստոսի 31	Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաստատում(ՈՒԴԱՊ)	ՈՒԴԱՊ-ը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը	Տնօրեն, մանկխոր
10	Ուստարվա ընթացքում	Հետևել և պահպանել ներքին կարգապահական կանոնները:	Վերահսկողություն ամբողջ տարվա ընթացքում:	Տնօրեն, ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ, տնտեսվար

ՍԵՊՏԵՄԲԵՐ

11	Սեպտեմբերի 1	Գիտելիքի օր	Համադպրոցական միջոցառում	Տնօրենություն
12	Սեպտեմբերի 1-4	Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում	Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով	Տնօրեն
13	Սեպտեմբերի 1-8	Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանների կազմում և հաստատում տնօրենի կողմից, դասղեկների տարեկան աշխ. Պլանների մշակման վերահսկում և հաստատման ներկայացում: ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում:	Թեմատիկ պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից, մ/մ հավանությամբ ներկայացվում է տնօրենի հաստատմանը: Դասղեկների տարեկան պլանները, երաշխավորված, ներկայացվում են տնօրենի հաստատմանը: ԱՈՒՊ-ների լրացումը իրականացվում է ուս. հաստատության ուսուցիչների և աջակցություն տրամադրող այլ մանկավարժական աշխատողների կողմից:	Մ/մ, Տնօրեն, ՄԿԱԳ տ/տ, տնօրենի տեղակալ

14	Սեպտեմբերի 1-8	Դասարանների և հաստատության ծնողական խորհուրդների ձևավորում: Ծնողական ժողովի անցկացում:	Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց կողմից ընտրված ծնողական խորհուրդների կազմից ձևավորում է հաստատության ծնողական խորհուրդը:	Տնօրենություն, դասղեկներ
15	Սեպտեմբերի 1-8	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում	Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում՝ կարիքավոր երեխաներին աջակցելու նպատակով:	Տնօրեն, ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ
16	Սեպտեմբերի 1-11	Տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և հաստատմանը ներկայացում:	Կազմում է տնօրենը և կառավարման խորհրդի հավանությամբ ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը:	Տնօրեն
17	Սեպտեմբերի 4-11	Առաջին կիսամյակի դասացուցակը, դասաբաշխումը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերը լրացնել emis.am էլ. համակարգ:	emis.am էլ. համակարգում կատարվում է նաև ուսուցիչների տվյալների փոփոխություն:	Տնօրեն, տնօրենի տեղակալ և էլ. կառավարման նա դասավանդման ապահովման մասնագետ
18	Սեպտեմբերի 4-15	Հանրակրթական ուս. հաստատության բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում	Հաստատության բյուջեի նախագիծը կազմում է տնօրենը և ներկայացնում խորհրդի քննարկմանը:	Տնօրեն
19	Սեպտեմբերի 21	Անկախության օր	Համադպրոցական միջոցառում	ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ, զինղեկ
20	Սեպտեմբերի 1-29	ՆԴՎ	Մնացորդային գիտելիքների ստուգում հանրահաշվից և երկրաչափությունից 9-րդ դասարաններում:	Տնօրինություն, մ/մ
21	Սեպտեմբերի 1-29	ՆԴՎ	Ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում:	Տնօրինություն մ/մ

22	Սեպտեմբերի 29	ՆԴՎ	թեմատիկ պլանի համապատասխանությունը դասամատյանում գրանցված դասերի թեմաներին: տնային աշխատանքի համապատասխանությունը օրվա դասի թեմային: էջում գնահատման սովորողների բացակայություններ հաշվառման առկայությունը: գրանցումների առկայությունը:	Տնօրեն, տնօրենի տեղակալ
23	Սեպտեմբերի 27	Այցելություն 44-օրյա արցախյան գոյամարտում նահատակված զինվորական պանթեոն:	Համադպրոցական միջոցառում	ՄԿԱԳ տ/տ,

ՀՈԿՏԵՄԲԵՐ

24	Հոկտեմբերի 5	ՈՒսուցչի տոն	Համադպրոցական միջոցառում	ՄԿԱԳ տ/տ
25	Սեպտեմբերի 22-հոկտեմբերի 10	Հանրակրթական ուս. հաստատության բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպում և բյուջեի նախագծի լրամշակում:	Հաստատության բյուջեի նախագծի քննարկումներ ծնողական, աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի հետ՝ առաջարկություններ և պարզաբանումներ ստանալու նպատակով:	Տնօրեն
26	Հոկտեմբերի 23-նոյեմբերի 10		Ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի փոփոխությունների կատարում, վերջնական տարբերակի մշակում:	
27	Հոկտեմբերի 2-20	ՆՎԴ / Մ/Մ նիստ/	Ուսումնական նախագծի թեմայի ընտրություն, դրանց իրականացմանն և բարելավմանն ուղղված հարցերի քննարկում: Ուսուցչի աշխատանքային գործունեության վերահսկողություն: Ապահովել փոխադարձ դասալսումների կազմակերպումը, կատարել դասալսումներ:	

28	Հոկտեմբերի 27	Մանկավարժական խորհրդի նիստ	Առանց ներդրման պետության կողմից տրամադրվող դասագրքերի վարձավճարների հատկացման և դպրոցի սոցիալապես անապահով սովորողների ցուցակի հաստատում: ՀՊՉ ներդրման խնդիրների քննարկում: Առարկայական օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների պլանի հաստատում: Էլեկտրոնային դասամատյանների լրացման ստուգումների արդյունքների քննարկում: Երկարօրյա ուսուցման կազմակերպում	Տնօրեն, ման. խորհուրդ
29	Հոկտեմբերի 30-նոյեմբերի 3	Աշակերտական խորհրդի նիստ՝ նվիրված դպրոցի կազմակերպչական աշխատանքներին		Տնօրեն, ՄԿԱԳ տ/տ
30	Հոկտեմբերի 9-31	ՆԴՎ	Տարրական դպրոցի 2-4-րդ դասարանների սովորողների գիտելիքների և հմտությունների ստուգում: Մնացորդային գիտելիքների ստուգում հայոց լեզվից և գրականությունից 9-րդ դասարաններում: Դասամատյանների ստուգում	

ՆՈՅԵՄԲԵՐ

31	Նոյեմբերի 1-3	Խորհրդակցություն՝ տնօրեն, տնօրենի տեղակալներ, մ/մ նախագահներ,	Քննարկել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի , սովորողների առաջադիմության արդյունքների, առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպչական հարցեր:Մ/Մ –ի առաջարկության հիման վրա քննարկվում է դասավանդման որակի ուսումնասիրության ծրագիրը (թեստ, թելադրություն, գրավոր աշխատանքի այլ տեսակներ) :	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահ
32	Նոյեմբերի 1	Ուս. հաստատության ջեռուցման կազմակերպում	Պարբերաբար հետևել դպրոցի շենքի ջերմային ռեժիմի պահպանմանը:	Տնօրենություն, տնտեսվար

33	Նոյեմբերի 9-13	Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովի կազմի հաստատման մասին	Առարկայական օլիմպիադաների կազմակերպման համար տնօրենի հրամանով ստեղծվում են առարկանական օլիմպիադաների հանձնաժողովներ:	Տնօրենություն, տնտեսվար
34	Նոյեմբերի 15-20	Մ/Մ կողմից հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Հումանիտար առարկաների և ՆԶՊ առարկայի օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը կազմում են մ/մ և ներկայացնում հաստատման:ԲՏՃՄ առարկաների օլիմպիադաների դպրոցական փուլը անցկացվում է առցանց:	Տնօրեն մ/մ
35	Նոյեմբերի	Համադպրոցական միջոցառում		ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ, ա/խ
36	Նոյեմբերի 13-24	ՆԴՎ	«Հայոց լեզու և գրականություն», բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն 9-րդ դասարանում	Տնօրեն մ/մ
37	Նոյեմբերի 6-10	ՆԴՎ	Գիտելիքների ստուգում հայոց պատմությունից 9-րդ դասարան	Տնօրենություն, մ/մ
38	Նոյեմբերի վերջ, դեկտեմբերի սկիզբ	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում: Տարական դասարաններում ուսումնական առարկաների ուսումնասիրության պլանի կազմում:	Հումանիտար առարկաների և ՆԶՊ առարկայի օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը կազմում են մ/մ և ներկայացնում հաստատման:ԲՏՃՄ առարկաների օլիմպիադաների դպրոցական փուլը անցկացվում է առցանց: Տարրական դասարաններում դասավանդման որակի ուսումնասիրություն(թեստ, թելադրություն, գրավոր աշխատանքի այլ տեսակ):	Տնօրենի տեղակալ ուսուցիչներ, մ/մ նախագահ, դասվարներ:
39	Նոյեմբերի 29-30	ՆԴՎ	Դասամատյանների ստուգում	
41	Նոյեմբերի 27-Դեկտեմբերի 8	ՆԴՎ	Գիտելիքների ստուգում ռուսաց լեզվից և ֆրանսերենից 5-9-րդ դասարաններում:	Տնօրենություն,

ԴԵԿՏԵՄԲԵՐ

40	Դեկտեմբեր	Ծնողական ժողովներ (սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում)	Ծնողական ժողովներում ներկայացնել սովորողների ուսումնական առաջադիմությունը:	Տնօրենություն, դասղեկներ
42	Դեկտեմբերի 1-15	Խորհրդի հավանությանը ներկայացնել բյուջեի նախագիծը		Տնօրեն
43	Դեկտեմբերի 22-29	Մանկավարժական խորհրդի նիստ 1Առաջին կիսամյակում սովո- րողների ուսումնական առա- ջադիմության արդյունքների ամփոփում 2.Տնօրենի տեղակալների, մ/մ նախագահների, ԴԱԿ-ի հաշվետվությունները: 3.Օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքների ամփոփումը /տարածաշրջամային փուլի մասնակցող սովորողների ցուցակները մ/մ երաշխավորությամբ հաստատվում են տնօրենի հրամանով: Էլեկտրոնային մատյանների վարման հարցերի քննարկում:	Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուստարվա առաջին կիսամյակում ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքները:	Տնօրեն
44	Դեկտեմբերի 27	Համադպրոցական միջոցառում		ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ, ա/խ

ՀՈՒՆՎԱՐ

45	Հունվարի 8-12	Երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի նախապատրաստում: Առաջին կիսամյակում չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքների պլանավորում:	Տնօրինության կողմից՝ 1.կազմվում է երկրորդ կիսամյակի ուս. պլանը, դասացուցակը, 2.կատարվում է դասաբաշխում, 3.աշխատանքներ չառաջադիմող աշակերտների հետ՝ չափորոշչի նվազագույն մակարդակի ապահովմամբ:	Տնօրենություն

46	Հունվարի 8-12	ՈՒս. հաստատության կառավարման խորհրդի նիստ՝ ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում, առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների քննարկում, զարգացման ծրագրի կատարման ընթացքի քննարկում	Տնօրենի ներկայացմամբ խորհուրդը քննարկում և հավանություն է տալիս առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությանը, հավանություն է տալիս և լիազոր մարմնի հաստատման է ներկայացնում ամենամյա ծախսերի հախահաշիվը, քննարկում են ուս. հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքը:	Տնօրեն
47	Հունվարի 24-28	Միջոցառում նվիրված բանակի օրվան		ՄԿԱԳ տ/տ, դասղեկներ, զինղեկ
48	Հունվարի 11-31	ՆԴՎ	Մատենավարության ստուգում, դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների կազմակերպման ստուգում	
49	Հունվարի 24-31	ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների լրացում և քննարկում	ԱՈՒՊ-ների լրացումը իրականացվում է ուսումնական հաստատության ուսուցիչների և աջակցություններ տրամադրող այլ մանկավարժական աշխատողների կողմից, իսկ քննարկումը՝ հունվարի վերջին՝Տնօրենի տեղակալի կողմից:	Տնօրենի տեղակալ, ՄԿԱԳ տ/տ աջակցող թիմ, ուսուցիչներ
50	Հունվարի 22-փետրվարի 1	Հերթական(պարտադիր) ատեստավորման ենթակա և կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների ցուցակների կազմում	Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերաբերյալ հաստատության տնօրենը անհրաժեշտ գրանցում է կատարում ԿՏԱԿ-ի Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում:	
51	Հունվարի 8-26	ՆԴՎ	Տարրական դպրոցի 1-4-րդ դասարանների թեմատիկ պլանների կատարողականի ստուգում, սովորողների ոչ միավորային գնահատման բնութագրերի կազմում:	
52	Հունվարի 8-22	ՆԴՎ	Դասալսումներ <<Դասի վերջնարդյունքների ապահովում>> թեմայով 5-9 դասարաններ	

53	Հունվարի 24-26	ՆԴՎ	1.Դասամատյանների ստուգում:Արդյունքների քննարկում մեթոդմիավորումների նիստում: 2.Պլանավորված և իրականացված աշխատանքների մեթոդմիավորումների արձանագրությունների համապատասխանության ստուգում	
54	Հունվարի 24-26	ՆԴՎ	Խմբակների, ուսումնական նախագծերի և երկարօրյա դասերի ծրագրերի կատարողականի ստուգում և արդյունքների գնահատում: Արդյունքների քննարկում մեթոդմիավորման նիստում:	

ՓԵՏՐՎԱՐ

55	Փետրվարի 1-9	Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլի նախապատրաստում	Տնօրինության կողմից՝ Տնօրենի տեղակալը ներկայացնում է օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքները	Տնօրենություն
56	Փետրվարի 1-16	Հերթական ատեստավորում անցած ուսուցիչների դասավանդման արդյունավետության մշտադիտարկում	Մշտադիտարկումն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները,մեթոդական միավորումների նախագահները	Տնօրենություն
57	Փետրվարի 1-28	ՈՒսումնական հաստատության ջեռուցման կազմակերպում՝ օդի ջերմային ռեժիմին ներկայացվող պահանջներին համապատասխան	Տնտեսվարը պարբերաբար հետևում է դպրոցի շենքի՝դասասենյակների, մարզադահլիճի ջերմային ռեժիմի պահպանմանը	Տնօրենություն Տնտեսվար Հնոցապան
58	Փետրվարի 12-28	ՆԴՎ իրականացում	1.Մատենավարության ստուգում 2.Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների վերահսկողություն	Տնօրենություն
59	Փետրվարի 19-23	ՆԴՎ: Թոմանյանական օրեր	Համադպրոցական միջոցառում	ԴԱԿ Գրադարանավար
60	Փետրվարի 20	ՆԴՎ: Մայրենիի միջազգային օր	Համադպրոցական միջոցառում	Տնօրենություն մ/մ

61	Փետրվարի 20-ից	Հունիս ամսին բնագիտական առարկաներից կազմակերպվող ավարտական քննությունների ցուցակի փոխանցում ԳԹԿ (9-րդ դասարան)	Ավարտական,պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների Հաստատության տնօրենը էլեկտրոնային եղանակով լրացնում և փոխանցում է ԳԹԿ:	Տնօրեն
62	Փետրվարի 1-23	ՆԴՎ	Ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում:	Տնօրենություն մ/մ, Գրադարանավար, ԴԱԿ
63	Փետրվարի 1-23	ՆԴՎ	Իրականացնել դասալսումներ՝ նպատակ ունենալով ուսուցչի կողմից սովորողների առաջադիմության ձևավորող գնահատման ուսումնասիրությունը	
64	Փետրվարի 12-16	ՆԴՎ	Գիտելիքների ստուգում 7-8-րդ դասարաններում քիմիայից և կենսաբանությունից	Տնօրենություն մ/մ

ՄԱՐՏ

65	Մարտի 1-5	Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Տնօրենի,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի,մ/մ նախագահների և այլ մակնավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ԲՏՃՄ բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման հարցը: Քննարկում է՝ փորձարկող դասարաններում Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջների իրագործման հարցերը:	Տնօրեն, Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/մ նախագահներ
66	Մարտի 8	<<Մարտի 8-ը կանանց միջազգային տոն >>	Միջոցառում	ՄԿԱ ԴԱԿ ԱԽ Մ/Մ նախագահներ

67	Մարտի 11-14	Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետները կազմելը	Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, բյուջեի հաստատման և կատարման մասին հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով տնօրենը կազմում է դպրոցի բյուջետային օրացույց. մինչև ընթացիկ տարվա մարտի 15-ը կազմում է՝ Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետները :	
68	Մարտի 18-22	Մանկավարժական խորհրդի նիստ	Քննարկում է հունվար-փետրվարին ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության, էլեկտրոնային մատյանների վարման, ուսումնական նախագծերի իրականացման և այլ հարցեր:	
69	Մարտի 25-29	Մեթոդմիավորումների նիստեր	Մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության և դրանց իրականացման հետ կապված հարցեր ԲՏՃՄ բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
70	Մարտի 27-29	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ	Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:	Տնօրենություն, դասղեկներ
71	Մարտ-ապրիլ	Ծաղկազարդ, Սուրբ Զատիկ	Համադպրոցական միջոցառում	ՄԿԱ , ԴԱԿ, ԱԽ դասղեկներ
72	Մարտի 4-14	ՆԴՎ	1-4-րդ դասարաններում իրականացնել դասալսումներ <<Ձևավորող գնահատում>> թեմայով	Տնօրենություն
73	Մարտի 18-21	ՆԴՎ	2-4 –րդ դասարաններում իրականացնել դասալսումներ <<Ուսուցչի կողմից ինքնուրույն աշխատանքի կազմակերպում>> թեմայով	Տնօրենություն
74	Մարտի 4-21	ՆԴՎ	7-9 –րդ դասարաններում Նախագծային աշխատանքների իրականացում	ուսուցիչներ

75	Մարտի 25-29	ՆԴՎ	5-9-րդ դասարաններում նպատակային էքսկուրսիաների կազմակերպում	ՄԿԱ, ԴԱԿ, ԱԽ դասղեկներ
76	Մարտի 11-20	ՆԴՎ	8-9-րդ դասարաններում գիտելիքների ստուգում <<Հայոց լեզու>>, <<Հանրահաշիվ>> և <<Երկրաչափություն>> առարկաներից	Տնօրենություն
77	Մարտի 25-29	ՆԴՎ	Դասամատյանների ստուգում: արդյունքների քննարկում մեթոդմիավորումների նիստում	Տնօրենություն
78	Մարտի 25-29	ՆԴՎ	Պլանավորված և իրականացված աշխատանքներին մեթոդմիավորումների արձանագրությունների համապատասխանության ստուգում	Տնօրենություն
79	Մարտի 25-29	ՆԴՎ	Խմբակների, ուսումնական նախագծերի և երկարօրյա դասերի ծրագրերի կատարողականի ստուգում և արդյունքների գնահատում: Արդյունքների քննարկում մեթոդմիավորումների նիստում	Տնօրենություն

ԱՊՐԻԼ

80	Ապրիլ 1-4	Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ՆԶՊ և Ֆիզկուլտուրա ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման,սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման հարցը:	Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/մ նախագահներ
81	Ապրիլի 1-մայիսի-15	9-րդ դասարանում նախապատրաստվել ավարտական քննություններին		Մեթոդական միավորումներ

82	Ապրիլի 8-12	Տնօրենի, տնօրենի տեղակալի մասնակցությամբ խորհրդակցություն	Տնօրենը, տնօրենի տեղակալը և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է տարվա ընթացքում սովորողների բացակայությունների նախնական հաշվառում անցկացնելու հարցը: Մատենավարության ստուգման արդյունքներ:	Տնօրեն, տնօրենի տեղակալ
83	Ապրիլի 22-30	Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Տնօրեն,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ուսումնական առարկաների դասավանդման որակը	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդմիավորումների նախագահներ
84	Ապրիլի 22-30	Անդրադարձ առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցության արդյունքներին	Տնօրեն,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը անդրադառնում է առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցությանը,նշում հաջողություններն ու դժվարությունները, խրախուսում օլիմպիադայում աչքի ընկած սովորողներին և նրանց ուսուցիչներին:	Տնօրեն
85	Ապրիլի 22-26	ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների քննարկում	Տնօրեն,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքները:	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ

86	Ապրիլի 1-26	ՆԴՎ	Իրականացնել դասալսումներ ԲՏՃՄ ուսումնական բնագավառի առարկաներից՝նպատակ ունենալով ուսումնասիրել նշված առարկաների դասավանդման որակը, սովորողների պատրաստվածության մակարդակը:	
87	Ապրիլի 8-26	ՆԴՎ	Գրավորներ- մաթեմատիկա,մայրենի ՝ 5-8-րդ դասարաններում	
88	Ապրիլի 24	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր	Միջոցառում	ՄԿԱ, ԴԱԿ, ԱԽ, դասղեկներ

ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍ

89	Մայիս	Համակարգել դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացը: Հստակեցնել դպրոցում ռազմահայրենասիրական գործընթացի մեթոդները,ձևերն ու միջոցները:Կազմակերպել բաց դասեր,ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր և հուշարձաններ/պատրաստել լուսանկարներ,նկարներ, տեսահոլովակներ և ցուցադրություններ կազմակերպել:	Համադպրոցական միջոցառումներ	
90	Մայիս	Գրագետ եմ ես արդեն Հրաժեշտ դպրոցին Վերջին դաս	Համադպրոցական միջոցառումներ	

91	Մայիսի 6-10	Ավարտական քննություններին, նախապատրաստության գործընթացի քննարկում	Տնօրեն,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ավարտական քննություններին նախապատրաստության ընթացքը,տալիս համապատասխան հանձնարարություններ:	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդմիավորումն երի նախագահներ
92	Մայիս 1-15	ՆԴՎ	9-րդ դասարանում գրավոր աշխատանք հայոց պատմությունից 4-րդ դասարաններում գիտելիքի ստուգում մայրենիից:	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդմիավորումն երի նախագահներ
93	Մայիսի 17	ՈՒսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 2-9-րդ դասարաններում սովորողների հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում	Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 2-9-րդ դասարանի սովորողների հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում:Ուսումնական տարվա ընթացքում 2-9-րդ դասարաններում 120-200 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով, կազմվում է ծամանակացույց,որը հաստատվում է տնօրենի կողմից:	մ/մ նախագահներ դասղեկներ

94	Մայիսի 13-17	Անդրադարձ էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներին ՈՒսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը՝ Հայոց պատմություն Համաշխարհային պատմություն Հասարակագիտություն	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալի,մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցություն քննարկում է ուսումանական առարկաների դասավանդման որակի ուսումնական տարվա ընթացքում իրականացված ուսումասիրության արդյունքները,հաջողություններն ու դժվարությունները, տալիս համապատասխան հանձնարարականներ: Խորհրդակցությունը քննարկում է նաև էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների հարցը,նշում թերությունները,կատարում հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ:	

95	Մայիսի 20-24	Անդրադարձ Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը	Ուսումնական հաստատության տնօրեն,ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին,գնահատում արդյունքները և տալիս համապատասխան հանձնարարություններ ուսումանդաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ: Խորհրդակցության ընթացքում բարձրացված հարցերը քննարկման են դրվում հաստատության մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում:	Տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդմիավորումն երի նախագահներ
96	Մայիսի 20-30	Ուումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 2-9-րդ դասարանների սովորողների՝ լրացուցիչ քննությունների ամփոփիչ ստուգողական աշխատանքների անցկացում	<<Մայրենի>> <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: <<Ֆիզկուլտուրա>> առարկայից անցկացվում է ստուգարք:	
97	Մայիսի 30-31	2-9-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, 4 և 9-րդ դասարանների սովորողներին քննություններին թույլատրելու, հարցի քննարկում	2-9-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, ավարտական քննություններին թույլատրելու որոշում է ընդունվում մանկավարժական խորհրդի նիստում:	Տնօրեն

98	Մայիսի վերջ	Արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպում	Մշակել գործողությունների պլան	Տնօրեն ՄԿԱ
99	Մայիսի վերջ-հունիս	Ավարտական, պետական ավարտական քննությունների անցկացում	Ավարտական, պետական ավարտական քննություններն անցկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ պահանջներին համապատասխան:	Տնօրեն
100	Հունիսի վերջ	Մանկավարժական խորհրդի նիստ	Ուս տարվա ամփոփում. ՄԿԱ-ի. Տնօրենի տեղակալի կատարողականի ամփոփում *Մանկավարժների կատարողականի հաշվետվությունների ներկայացում, *Մ/մ կատարողականի հաշվետվությունների ներկայացում,կատարած աշխատանքների վերլուծություն * 9-րդ դասարանների ավարտական,պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում: *դասղեկների հաշվետվություն *2023-2024 ուստարվա նախնական դասաբաշխում	
101	Հուլիսի սկիզբ կամ օգոստոսի 20-30	Ուսումնական գծով տ/տ –ի հաշվետվության ներկայացում Մ/Խ-ի նիստում	Վերաքննություններն անցկացվում են Նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում:	